Կայացաւ Ծովինար Խաչատրեանի «Գիւրջեւանի վերջին բնակիչը» գրքի շնորհանդէսը

Նոյեմբերի 16-ին «Համազգային»-ի հայ կրթական եւ մշակութային միութեան Երեւանի գրասենեակում կայացաւ արձակագիր, սցենարիստ, ծնունդով Արցախից Ծովինար Խաչատրեանի «Գիւրջեւանի վերջին բնակիչը» գրքի շնորհանդէսը: Շնորհանդէսին ներկայ էին գրողներ ու մտաւորականներ, հրաւիրուած էին նաեւ Արցախի գրողների միութեան անդամներ, արուեստագէտներ:

Ներկաները մէկ րոպէ լռութեամբ յարգեցին Արցախեան բոլոր ազատամարտերում անմահացած հերոսների յիշատակը:

Շնորհանդէսի ձեւաչափը տարբերւող էր, այն շատ մտերմիկ էր ու անմիջական: Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ «Համազգային»-ի Երեւանի գրասենեակի տնօրէն Ռուզան Առաքելեանը: Նա նախ նշեց, որ գրողի ապրած կեանքն ու նրա ստեղծած գրականութիւնը շատ ներդաշնակ են, որովհետեւ գրքում արտացոլուած է նաեւ հեղինակի մարդ տեսակը: Այնուհետեւ Ռ. Առաքելեանը շեշտեց. «Այս օրերին, երբ բոլորիս սեւեռակէտն Արցախից տեղահանուած մեր հայրենակիցներն են ու Արցախի ճակատագիրը, երբ մեր հոգու թաքուն անկիւնում փայփայում ենք Արցախ վերադառնալու յոյսն ու հաւատը, խորհրդանշական է կազմակերպել մի գրքի շնորհանդէս, որն ընդհանրացնում է Արցախ աշխարհը: Մէկ գիւղի պատկերով Ծովինար Խաչատրեանը կարողացել է արտացոլել Արցախի ամբողջական պատկերը, իսկ դա, առաջին հերթին, գրողի հմուտ գրչի մասին է վկայում»: Ռուզան Առաքելեանը յորդորեց կարդալ գիրքը եւ գրքի միջոցով իւրովի ճանաչել ու բացայայտել Արցախը:

Գրքի մասին իր տպաւորութիւններով կիսուեց գրող, «Համազգային»-ի հայ կրթական եւ մշակութային հիմնադրամի նախագահ Սպարտակ Ղարաբաղցեանը: «Ծովինար Խաչատրեանն անմնացորդ սիրով է պատմում հայաշունչ, հինաւուրց Գիւրջեւանի թաղերի, մարդկանց, աւանդոյթ-ծէսերի մասին: Պատմում է՝ ցաւ ու տխրութիւն խառնած յուշերին: Գիւրջեւանի նշանաւոր, անխառն գինին թանձրացել, դարձել է մելան ու Ծովինարի գիրն այդ մելանով է թաթախուած»,- շեշտեց Սպարտակ Ղարաբաղցեանը:

Գրքի խմբագիր, «Արմաւ» հրատարակչութեան գլխաւոր խմբագիր Արմէն Աւանէսեանն էլ իր խօսքում կարեւորեց, որ գիրքը ոչ միայն խօսուն վկայութիւն է մեր ոխերիմ հարեւանների տեսակի մասին, այլեւ իւրօրինակ պատգամ է՝ անցեալից դասեր քաղելու վերաբերեալ: Դասեր, որ այդպէս էլ չհասցրինք քաղել՝ կանգնելով նոր կորուստների առջեւ:

Լրագրող, թարգմանիչ, ծնունդով գիւրջեւանցի Միքայէլ Հաջեանը ներկաների հետ կիսուեց իր հայրենի գիւղի նկարագրով, գիւղի հայաթափման ցաւալի իրողութեան ու գիւրջեւանցիների մասին զրոյցներով: Անդրադառնալով գրքին ու հեղինակին Հաջեանը նշեց. «Գիւրջեւան անուան տակ ես տեսնում եմ արեւմտեան մերձկասպեայի հայութեան կեանքի ու ճակատագրի պատմութիւնը: Ծովինարը կարողացել է կերտել հայաշխարհի այդ հատուածի թէ՛ բնապատկերը, թէ՛ մարդկային նկարագիրը՝ իր աւանդոյթներով ու սովորոյթներով: Այս գիրքը նաեւ կարեւոր է հայոց պատմութեան վաւերագրութեան տեսանկիւնից»:

Գրքին անդրադարձաւ նաեւ ընթերցող Գոհար Պետրոսեանը՝ զուգահեռներ անցկացնելով գրքում արտացոլուած իրականութեան եւ ներկայի միջեւ:

Շնորհանդէսին հնչեց Միքայէլ Հաջեանի հեղինակած «Գիւրջեւան» երգը՝ երգահան, երգչուհի Ալվարդ Բաղալեանի կատարմամբ (Երաժշտութիւնը՝ Ալվարդ Բաղալեանի):

Իր սրտի խօսքն ասաց գրքի շապիկի ձեւաւորող, նկարիչ Սուսաննա Բուդաղեանը:

Միջոցառումն ամփոփեց հեղինակի՝ Ծովինար Խաչատրեանի խօսքով:

«Գրքի ստեղծման հիմնական նպատակն է եղել մոռացութեան երախից փրկել հիւսիսային Արցախի դատարկուած, կորսուած գիւղերից մէկի կեանքի պատմութիւնը, յիշատակները, կոլորիտը, այնտեղ ապրող մարդկանց տեսակը, հոգեբանութիւնը, ծէսերը: Նաեւ խնդիր եմ դրել ցոյց տալու երկու ազգերի՝ հայի ու ադրբեջանցու ընդհանրական տիպերը, կերպարները, ցոյց տալու, թէ ովքեր ենք մենք ու ովքեր են նրանք: Ցոյց տալու ոչ միայն հայ ընթերցողին, այլ նաեւ աշխարհին»,- շեշտեց Ծովինար Խաչատրեանը:

Շնորհանդէսն անցաւ ջերմ ու ընկերական մթնոլորտում:

«Համազգային»-ի Երեւանի գրասենեակ
Arfd.am



«ՀԱՅԵՐԻ ԵՒ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ»

Հեղինակ՝ Տ. Էդիկ եպս. Բարոնի

Անցեալ դեկտեմբերին ներկայացրել էինք Կաթողիկէ եկեղեցու հոգեւորական Տ. Էդիկ եպս. Բարոնիի իտալերէն լեզւով աշխատասիրած գիրքը՝ հայ եւ ասորի ժողովուրդների Ցեղասպանութեան պատմութեան մասին, որում տեղեկացւած էր գրքի մօտալուտ անգլերէն լեզւով հրատարակութեան մասին: Ուրախութեամբ տեղեկացել ենք, որ հրատարակւել է թարգմանութիւնը «THE ARMENIAN AND ASSYRIAN GENOCIDE» խորագրով «Քինդլ Էդիշըն» (Kindle Edition) հրատարակութեան միջոցով:

Գրքի ծանօթագրութիւնում կարդում ենք հետեւեալը, որը շարադրուած է անգլիախօս հանրութեան համար.

«Հայերի եւ ասորիների ցեղասպանութիւնը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանեան կայսրութիւնում հայ եւ ասորի ժողովրդի եւ նրանց ինքնութեան համակարգւած ոչնչացումն էր:

Թալէաթ փաշայի հրամանով 1915 թւականին սիրիական անապատում սպանւել է մօտ 1,500,000 հայ: Հայերն օգտագործում են Մեծ Եղեռն արտայայտութիւնը (հայերէն Մեծ Եղեռն՝ «մեծ յանցագործութիւն»): Նոյնը եղաւ ամբողջ ասորի բնակչութեան հետ՝ 275000 զոհերով, որոնք յիշւում են որպէս Սէյֆօ: Զինեալ ուղեկցորդների կողմից առաջ մղւելով՝ տարագրւածները զրկւել են սննդից եւ ջրից եւ ենթարկւել կողոպուտների, բռնաբարութիւնների եւ ջարդերի: Հայ եւ ասորի քրիստոնեաների զանգւածային սպանութիւններին եւ արտաքսմանը զուգընթաց այն թոյլ տւեց երիտթուրքերին ստեղծել ցեղապաշտ-նացիոնալիստական թուրքական պետութիւն:

Թուրքիայի կառավարութիւնը պնդում է, որ հայերի եւ ասորիների տեղահանութիւնը օրինական գործողութիւն էր, որը չի կարող որակւել որպէս ցեղասպանութիւն: Հայերն ու ասորիները շարունակում են պահանջել աշխարհի բոլոր երկրներից իրենց հանդէպ իրագործւած ցեղասպանութեան ճանաչումը»:

«Դու ֆիլմեր արա ու լռիր»

Կայացաւ Փելեշեանի «Յուշեր» գրքի շնորհանդէսը

Նոյեմբերի 16-ին Գաֆէսճեան արուեստի կենտրոնում տեղի ունեցաւ գեղարուեստական, վաւերագրական եւ հեռուստատեսային ֆիլմերի մեծանուն ռեժիսոր, Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական արտիստ, «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանակիր Արտաւազդ Փելեշեանի նոր՝ «Յուշեր» գրքի շնորհանդէսը, որը նուիրւած է վարպետի մօր յիշատակին: Ելոյթ ունեցաւ նաեւ վարպետ Փելեշեանը: Նա ներկաներին ուրախացրեց իր կեանքի յիշարժան դրւագներից մէկով:



«Շատ տարիներ առաջ ես ապրում էի «Արմենիա» հիւրանոցում: Մի երեկոյ զանգ պատւիրեցի Կիեւ՝ Փարաջանովի տան համարով: Միացրին: Աւելի քան մէկ ժամ խօսեցինք շատ թեմաներից, մինչեւ անգամ բամբասեցինք ստուդիայի ղեկավարութիւնից: Հեռախօսը ցած դրեցի ու անմիջապէս զանգահարեց փոստի աշխատողը, ասեց, որ մէկ ժամ ու քանի րոպէ խօսել ենք, յետոյ աւելացրեց, որ վճար չի վերցնելու: Երբ հարցրի, թէ ինչու, ասաց. «այդպիսի հետաքրքիր զրոյց ես կեանքումս չէի լսել»»,- վերյիշեց Փելեշեանը:

Նրա խօսքով՝ այդ կինը եկել է հիւրանոց անձամբ ծանօթանալու իր հետ: Առաջարկել է Փելեշեանին իրեն տրամադրել իր ունեցած բոլոր արտասահմանեան հեռախօսահամարներն ու խոստացել անվճար զանգեր՝ հաճելի զրոյցներ լսելու ակնկալիքով: Ինչպէս իր բոլոր գործերում, Փելեշեանը մեծ տեղ է տալիս լռութեանը:

«Դու ֆիլմեր արա ու լռիր». գրքի կազմի վրայ յիշեցնում է Փելեշեանը:

News.am